**Արձանագրություն N 3**

ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 օգոստոսի 2017թ
ժամը 10:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Մաթևոսյանը
անդամներ՝ Ա.Հովհաննիսյանը, Ռ.Տոնոյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Ա.Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց.

ա/ «Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Հազարաշեն» ՍՊԸ-ին:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա.Մաթևոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ ____________ Ա. Մաթևոսյան

անդամներ՝ ____________ Ա.Հովհաննիսյան

____________ Ռ. Տոնոյան

քարտուղար՝ ____________ Գ. Ջանջուղազյան